ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁ

Օրհնություններ, որոնք գալիս են սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունից

Երեց Սամայկին, Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի նախագահության երկրորդ խորհրդական

Մորմոնի գրքի առաջին պատմություններից մեկն այն մասին է, թե ինչպես Մարգարե Լեքին իր ընտանիքով հեռացավ Երուսաղեմից: Արդեն երեք օր նրանք ճամփորդում էին անապատում, երբ Աստված պատվիրեց նրան ետ ուղարկել իր որդիներին Երուսաղեմ սուրբ հիշատակարանների հետևից, որպեսզի օգներ Լեքիին ու նրա ժողովրդին պահպանել հավատը, ինչպես նաև ճանաչել Աստծո պատվիրանները, որոնք անհրաժեշտ էին ժողովրդին, որ չլինի թե «անհավատության մեջ ընկնի և կորչի» [1 Նեփի 4.13, 15]:

Ինչպես Լեքիի ընտանիքի դեպքում, մեր կյանքի ճանապարհին ևս կարող են հանդիպել տարբեր դժվարություններ: Որոշակի հանգամանքներում մեր հավատը կարող է թուլանալ, իսկ մի քանի պատվիրաններին հետևելը կարող է դառնալ ծանր բեռ: Այնուամենայնիվ, մեր սիրող Երկնային Հայրը միշտ պատրաստ է օգնության և աջակցության ձեռք մեկնել մեր կյանքի դժվարին պահերին: Այդ նպատակների համար Նա մեզ անփոխարինելի գործիք է տվել՝ սուրբ գրությունները: Ահա թե ինչու 2017թ.-ի ապրիլյան գերագույն համաժողովին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է. «Ես կոչ եմ անում ձեզանից յուրաքանչյուրին ամեն օր աղոթքով ուսումնասիրել Մորմոնի Գիրքը և խորհել նրա ուսմունքների շուրջ: Այդպես վարվելով, մենք կկարողանանք լսել Հոգու ձայնը, դիմակայել գայթակղություններին, հաղթահարել կասկածներն ու վախերը և մեր կյանքում օգնություն ստանալ երկնքից» [«Մորմոնի Գրքի ուժը», գերագույն համաժողով, ապրիլ 2017]: Մորմոնի Գիրքն իրոք զարմանալի ուժ ունի: Այն առանձնահատուկ սուրբ գրություն է, որը կարող է յուրաքանչյուրին հատուկ հոգևոր ուժ ու ներշնչանք պարգևել:

Խոստացված աջակցությունն ու օրհնությունը ստանալու համար կարևոր է ոչ միայն այն, թե մենք ինչ ենք կարդում, այլև այն, թե ինչպես ենք կարդում: Նախագահ Հովարդ Վ. Հանթերը անդամների ուշադրությունը հատկապես հրավիրում էր սուրբ գրությունների ուսումնասիրության հետևյալ կողմերի վրա. «Ընթերցանության համար օրվա հատուկ ժամ ընտրելուց շատ ավելի կարևոր է սուրբ գրությունների կանոնավոր ընթերցանությունը: Լավագույն տարբերակն այն է, որ սուրբ գրությունների ընթերցանությանը հատկացվի օրական մեկ ժամ, բայց եթե այդքան ժամանակ չեք կարող տրամադրել, ապա կես ժամ կանոնավոր ընթերցանությունը էական արդյունքներ կտա: Քառորդ ժամը քիչ ժամանակ է, բայց զարմանալի է, թե որքան գիտելիք ու կրթություն կարելի է ձեռք բերել այդ ժամանակում այդքան կարևոր նյութից: Կարևոր է, որ թույլ չտանք որևէ այլ բանի խոչընդոտել մեր ուսումնասիրությանը» [*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Հովարդ Վ. Հանթեր*, գլուխ 10, էջ 157]:

Սուրբ գրությունների միջոցով մենք կարող ենք նաև ստանալ մեր աղոթքների պատասխանները, սովորել ճանաչել և հետևել Սուրբ Հոգու հուշումներին: Հատկապես այդ մասին է խոսել Երեց Ռիչարդ Գ. Սքոթը իր ուղերձներից մեկում. «Տիրոջ հետ մենք խոսում ենք աղոթքի միջոցով: Շատ հաճախ Նա մեզ պատասխանում է Իր գրավոր խոսքերի միջոցով: Որպեսզի իմանանք, թե ինչպես է հնչում Աստվածային ձայնը, և ինչ ենք զգում այդ ժամանակ, պիտի ուսումնասիրենք Նրա խոսքերը, սուրբ գրությունները և խորհենք կարդացածի շուրջ: Դարձրեք դրանք ձեր ամենօրյա կյանքի անբաժան մասը: Եթե ցանկանում եք, որ ձեր երեխաները ճանաչեն Սուրբ Հոգու հուշումները, հասկանան դրանք և գործեն ըստ դրանց, դուք պիտի ուսումնասիրեք սուրբ գրությունները նրանց հետ: [«Հավատքի դրսևորումը թող լինի ձեր հիմնական առաջնահերթությունը», գերագույն համաժողով, հոկտեմբեր 2014]:

Արդարակյաց երեխաներ դաստիարակելու թեման շատ մոտ է իմ սրտին: Ես և կինս ունենք երեք

փոքր երեխաներ, և մենք հաճախ ենք քննարկում այն թեման, թե ինչպես օգնենք նրանց արադարակյաց մնալ իրենց կյանքի ճանապարհին: Մեր ընտանեկան կյանքի առաջին օրերից մենք որոշել ենք ամեն օր ընտանիքով սուրբ գրություններ ուսումնասիրել: Երբ երեխաներ չունեինք, ամեն բան ստացվում էր: Մենք նույնիսկ վարում էինք անձնական օրագրեր, որտեղ ընթերցանությունից հետո գրի էինք առնում մեր մտքերն ու զգացմունքները: Բայց երբ ծնվեցին երեխաները, սուրբ գրությունների ուսումնասիրությունն ամբողջ ընտանիքով ավելի դժվարացավ: Սակայն մենք չէինք հուսահատվում և փորձում էինք տարբեր հնարավորություններ փնտրել, որպեսզի հասնեինք նշված նպատակին:

Այժմ մեր զավակները մեծացել են, բայց նրանց համար դժվար է կենտրոնանալ մեր կարդացածի վրա: Ուստի մենք հաճախ ստիպված ենք լինում դադար տալ ընթերցանության ընթացքում և մատչելի մեկնաբանել կարդացած նյութը: Լինում են պահեր, երբ մեզ թվում է, որ երեխաները չեն լսում, և մենք իզուր ժամանակ ենք վատնում: Այդպիսի պահերին հատկապես հիշում եմ Երեց Կ. Բրեթ Նաթրեսի պատմությունը, որտեղ նա նկարագրել է իր մանկական հիշողությունները: «Մի օր առավոտյան ես որոշեցի մայրիկիս հետ պարզել իրավիճակը: Ես հարցրի. «Մայրի՛կ, ինչո՞ւ ես դու դա անում: Ինչո՞ւ ես ամեն առավոտ կարդում Մորմոնի Գիրքը»: Ապա ես ասացի մի բան, ինչն ամաչում եմ խոստովանել: Նույնիսկ չեմ հավատում, որ ես ասել եմ դա: «Մայրի՛կ, ես չեմ լսում»: Նրա սիրառատ պատասխանը դարձավ իմ կյանքի ամենավճռական պահերից մեկը: Նա պատասխանեց. «Որդի՛ս, ես մասնակցել եմ մի ժողովի, որտեղ նախագահ Մարիոն Գ. Ռոմնին խոսում էր այն օրհնությունների մասին, որոնք գալիս են սուրբ գրությունների ընթերցանության շնորհիվ: Այդ ժողովի ժամանակ ինձ խոստում տրվեց, որ եթե ես իմ զավակների համար ամեն օր կարդամ Մորմոնի Գիրքը, ապա ես երբեք նրանց չեմ կորցնի»: Հետո նա նայեց իմ աչքերի մեջ և բացարձակ վստահությամբ ասաց. «Իսկ ես քեզ չեմ կորցնի»: [«Չկա ավելի մեծ ուրախություն, քան իմանալ, որ նրանք գիտեն», գերագույն համաժողով, հոկտեմբեր 2016]:

Ես հավատում եմ, որ Նախագահ Ռոմնիի խոստումն արդիական է նաև մեր ժամանակներում: Եթե սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունը մեր ընտանիքներում դառնա ամրացած սովորություն, ապա մենք կարող ենք լավագույնս աջակցել ու պաշտպանել մեր զավակներին, իսկ մեր անձնական կյանքը կլցվի մեծ լույսով: ■

ԻՆՉՊԵՍ ԵՄ ՃԱՆԱՉԵԼ

Աստծուն հետևելով մենք կարող ենք երջանիկ լինել

Արտյոմ Դալլաքյան, Գյումրի ճյուղ

15 տարի է անցել այն օրվանից, երբ Գյումրի քաղաքի փողոցներից մեկով քայլելիս հանդիպեցի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներին: Այդ հանդիպումը իմ և ընտանիքիս համար դարձավ կյանքի փոփոխության սկիզբ, այդ օրվանից սկսած՝ իմ ընտանիքն ապրում է համերաշխության և սիրո ներքո: Այդ օրվանից մենք սկսեցինք ճանաչել Հիսուս Քրիստոսին:

Մեկ տարի ուսուցանվելուց հետո, կարդալով Մորմոնի Գիրքը, լսելով մարգարեի խոսքը և ձեռք բերելով մեծ վկայություն, ես մկրտվեցի ու ստացա Սուրբ Հոգի: Ես գիտեմ, որ Հիսուսը Աստծո Որդին է, ով խաչվեց մեր մեղքերի համար:

Այդ օրվանից ես Աստծո ճշմարիտ Եկեղեցու անդամն եմ: Յուրաքանչյուր տարի ավելի ու ավելի է մեծանում իմ վկայությունը Հիսուս Քրիստոսի Եկեղեցու վերաբերյալ: Ես տեսնում եմ, թե Տերը ինչ օրհնություններ է տալիս մեզ՝ ինձ և իմ ընտանիքին: Ճանաչելով Քրիստոսին ես բացահայտում եմ ինձ: Դա զգացել եմ սուրբ Տաճարում, երբ մկրտվում էի հայրիկիս համար:

Ես մեծ վկայություն ունեմ, որ Եկեղեցում գործող քահանայությունը իրոք ճշմարիտ է: Սա ամբողջ երկրի վրա միակ ճշմարիտ

Արտյոմ Դալաքյանը ընտանիքի հետ

եկեղեցին է, որ առաջնորդվում է կենդանի Մարգարեի և Առաքյալների հայտնությունների միջոցով, ովքեր ունեն Աստծո քահանայությունը: Մեծ օրհնություն է՝ իմանալ և հասկանալ, որ քահանայության զորությունն ու ուժը տրված են մարդկանց փրկելու համար:

2016 թվականից մինչ այսօր ծառայում եմ որպես Գյումրի ճյուղի նախագահ: Ծառայելով այս կոչման մեջ ես զգում եմ, թե ինչքան է Աստված օրհնում ինձ և երախտապարտ եմ դրա համար: Ծառայել Տիրոջը և մարդկանց նշանակում է տալ այն սերը, որ Տերը տալիս է մեզ, լինել ուժեղ ու բարի: Կարևոր է նաև լինել համբերատար ուսուցիչ բոլորի համար:

Վկայում եմ, որ հետևելով Հիսուս Քրիստոսին, քայլելով Նրա ճանապարհով ու համբերելով մինչև վերջ մարդիկ կունենան երջանկություն: ■

ՏԵՂԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ

Կոչումս ուսուցանում է ինձ ծառայել

Հրանուշ Սարգսյան, Գյումրի ճյուղ

Ես կանչված եմ Եկեղեցում որպես Գյումրի ճյուղի Երիտասարդ Կանանց նախագահ: Երիտասարդ Կանայք ճյուղում շատ չեն: Երբ ես նրանց հետ առաջին անգամ ծանոթացա, զգացի, որ ուզում եմ օգնել նրանց ավելի երջանիկ լինել և լուծել նրանց խնդիրները:

Ես իմ փորձից գիտեմ, որ աշխարհիկ դժվարությունները կարելի է հաղթահարել սուրբ գրություններն ուսումնասիրելու միջոցով և նույնը փորձեցի սովորեցնել այն աղջիկներին, ում ես ծառայում եմ: Ես ցանկանում եմ, որ նրանք հասկանան ու հիշեն, թե սուրբ գրությունները որքան արժեքավոր են հավատն ու վկայությունը ամրացնելու և դժվար իրավիճակներից միակ ճիշտ ճանապարհը գտնելու հարցում:

Ես գիտեմ աղոթքի զորությունը և որ դա հաղորդակցվելու միջոց է Երկնային Հոր հետ: Թե նախկինում ես աղոթում էի միայն իմ ընտանիքի համար, այժմ աղոթում եմ բոլոր երիտասարդ կանանց համար, ում ես ծառայում եմ: Ես սկսեցի սիրել այդ աղջիկներից յուրաքանչյուրին այնպես, ինչպես իմ աղջկան եմ սիրում ու անհրաժեշտության դեպքում փորձում եմ օգնել նրանցից յուրաքանչյուրին:

Ծառայելով ես հասկացա, որ տնօրինելով մեր կյանքի ժամանակը, պետք է կարողանանք այդ ժամանակից հատկացնել Աստծո գործին, քանի որ այսպես ենք մենք ծառայում մեր մերձավորներին և ավելի լավը դառնում: ■

Հրանուշ Սարգսյան

Նա երբեք չի թողնի մեզ առանց Իր աջակցության

Մայրանուշ Մելքոնյան, Գյումրի ճյուղ

Ես մեծ վկայություն ունեմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ճշմարտացիության վերաբերյալ: Ես հոգևոր մեծ փորձառություն ունեցա, երբ կանչվեցի ծառայելու

Մայրանուշ Մելքոնյան

որպես Գյումրի ճյուղի Սփոփող Միության նախագահ: Ինձ թվում էր, թե չեմ կարողանալու ամեն ինչ անել այնպես, ինչպես Տերն է ուզում: Սակայն առաջին իսկ օրից հենց Տերն օգնեց ինձ իմ ծառայության մեջ:

Ես վկայում եմ, որ Տերն անպայման տալիս է մեզ այն, ինչ խոստանում է, երբ մենք ապրում ենք համաձայն պատվիրանների ու մեր կապած ուխտերի: Նա առաջնորդելու հմտություն և սեր է դնում մեր սրտերի մեջ և երբեք չի տալիս հանձնարարություններ, առանց ճանապարհներ պատրաստելու դրանց կատարման համար:

Գիտեմ, որ ծառայությունը շատ մեծ օրհնություն է բերում մեր կյանք: Հիշենք Բենիամին թագավորի այս իմաստուն խոսքերը. §Եվ ահա, ես ասում եմ ձեզ այս բաները, որ դուք կարողանաք իմաստություն սովորել. որ դուք կարողանաք սովորել, որ երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք» (Մոսիա 2.17):

Ամեն անգամ, երբ ծառայելիս հանդիպում եմ դժվարություններին, աղոթում եմ և Սուրբ Հոգին ուղեկցում ու առաջնորդում է ինձ: Իր առաջնորդությամբ Նա միշտ ցույց է տալիս ճիշտ ճանապարհը, ինչից ես ավելի եմ զորանում և ամրապնդվում է իմ վկայությունը:

Տերը մեզ շատ է սիրում և ինչ էլ որ պատահի, երբեք մենակ չի թողնի: ■

Գնալ միսիա և կիսվել ավետարանով

Էմմա Հարությունյան, Գյումրի ճյուղ

Ես 3,5 տարեկան էի, երբ իմ ընտանիքը հանդիպեց ամերիկացի միսիոներներին: Իմ ընտանիքը ուսուցանվեց և միացավ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն: Ես էլ էի Եկեղեցի հաճախում ընտանիքիս հետ և այստեղ սովորում և հարստանում էի հոգով:

Երբ դարձա 8 տարեկան, ավագ եղբայրս՝ Սերգեյ Հարությունյանը մկրտեց ինձ:

Ես էլ դարձա Եկեղեցու անդամ: Ավագ եղբայրս 2 տարի ծառայեց լիաժամկետ միսիա Դոնի-Ռոստովում: Երբ նա վերադարձավ, մենք միշտ տանը զրուցում էինք իր միսիոներական ծառայության մասին: Նա ինձ խրախուսում էր, որ ես էլ ծառայեմ ու կատարեմ միսիոներական աշխատանք, փրկեմ հոգիներ՝ սովորեցնելով Հիսուս Քրիստոսի ավետարանը: Երկար ժամանակ ես խորհել և ծոմ եմ պահել այդ նպատակով՝ որ ես էլ ծառայեմ որպես միսիոներ: Միշտ աղոթում ու կարդում էի սուրբ գրությունները: Երբ կարդացի Մորմոնի Գրքից 1 Նեփի 21.6 հատվածը, դա եղավ իմ աղոթքների պատասխանը. §Եվ նա ասաց. Դա թեթև բան է, որ դու պետք է իմ ծառան լինես՝ Հակոբի ցեղերը բարձրացնելու և Իսրայելի պահպանվածներին վերադարձնելու համար»: Միսիոներական ծառայությունը

Քույր Հարությունյան

ամենափոքր բանն է, որ կարող եմ անել Երկնային Հոր համար:

Անցյալ տարվա ապրիլի 3-ին, առավոտյան, ցցի նախագահը զանգահարեց ինձ ու ասաց, որ իմ միսիոներական ծառայության կանչնամակը եկել է: Շատ ուրախացա, որ վերջապես ես էլ կգնամ միսիա, կքարոզեմ Հիսուս Քրիստոսի ավետարանը և կփրկեմ շատ հոգիներ: Եկավ ծրարը բացելու պահը. . . . Ես միշտ մտածում էի, թե ուր է Աստված ինձ ուղարկելու ծառայության: Մտքովս չէր անցնում, որ դա կլինի Ուկրաինայի Կիև քաղաքը:

Հիշում եմ ցցի նախագահի խոսքերը. §Նա Աստծո դուստրն է ու պատրաստ է ծառայելու, որտեղ էլ որ Աստված նրան կանչի»:

Երբ տուն էինք վերադառնում, ճանապարհին կարդում էի Մորմոնի Գրքից Ալմա 29-ը գլուխը:

Ալմա 29.9-ում ասվում է. §Ես գիտեմ այն, ինչ Տերը պատվիրել է ինձ, և հրճվում եմ դրանով: Ես չեմ հրճվում ինձանով, այլ հրճվում եմ նրանով, ինչ Տերը պատվիրել է ինձ. այո, և սա է իմ հրճվանքը, որ գուցե կարողանամ Աստծո ձեռքում գործիք լինել, որ ինչ-որ մի հոգու ապաշխարության բերեմ. և այս է իմ ուրախությունը»:

Ի՜նչ հիանալի հատված է: Շատ կարևոր է, որ ծառայեմ այնտեղ, որտեղ շատ հոգիներ են սպասում ինձ՝ իմ վկայությամբ ու ուղերձով կիսվելով այնպես, ինչպես մի քանի տարի առաջ երկու միսիոներներ եկան ու Աստծո խոսքով կիսվեցին իմ ընտանիքի հետ:

Ես ու իմ ընտանիքը ունենք մեծ օրհնություններ ու երջանկություն՝ կիսվելով ուրիշների հետ:

Ես վկայում եմ, որ Աստված ապրում է, որ Նրա միածին որդին Հիսուս Քրիստոսն է, որ Նա ծնվել է Սուրբ Հոգու զորությամբ, քարոզել, մեր բոլորի մեղքերի համար խաչվել է ու հետո հարություն առել:

Գիտեմ, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը թափանցող այն լուսն է, որ ամեն անհույս օր ցնծացող առավոտ է դարձնում:

Ես վկայում եմ, որ սա Հարություն առած Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է: Երկնային Հայրը լսում է ու պատասխանում մեր աղոթքներին:

Գիտեմ, որ մենք ավելի կմոտենանք Փրկիչին, եթե մաքուր սիրով լցված մնանք, ծառայենք ու հնազանդվենք պատվիրաններին: ■

ՍԻՐՎԱԾ ՀԱՏՎԱԾ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Վստահ եղեք, որ Աստված կպատասխանի ձեր աղոթքին

Անի Ս., Արաբկիր ճյուղ.

Իմ սիրած հատվածը Մորմոնի Գրքից՝ 3 Նեփի 14.7,8:

Խնդրեք, և ձեզ կտրվի. փնտրեք, և դուք կգտնեք. թակեք, և ձեզ համար կբացվի:Քանզի ամեն մեկը, որ խնդրում է, ստանում է. և նա, ով փնտրում է, գտնում է, և նրան, որ թակում է, կբացվի»: Ես հասկանում եմ սա այսպես. եթե մենք աղոթենք անկեղծ միտումով

Անի Ս.

և խնդրենք Աստծուց՝ մեզ կտրվի այն ամենը, ինչ մենք խնդրում ենք: Պարտադիր չէ երկար սպասել, այլ պետք է հավատք գործադրել և մեզ խոստում է տրված, որ մենք կստանանք մեր աղոթքի պատասխանը: Ես հավատում եմ, որ մենք՝ երիտասարդներս, երբ որոշում կայացնելիս լինենք, օրինակ, թե ինչ մասնագիտություն ընտրենք կամ որ համալսարանն ընդունվենք, մենք կարող ենք ապավինել Աստծուն, որոշումը կայացնենք, հետո աղոթենք Աստծուն ուղղորդության համար և եթե Աստված հավանություն տա մեր ընտրությանը, ապա մենք դա կզգանք: ■

Կարևոր է անկեղծ հավատք ունենալ Քրիստոսի հանդեպ

Էլեն Գ., Արաբկիր ճյուղ.

Կցանկանայի կիսվել իմ սիրած հատվածով Մորմոնի Գրքից՝ Մորոնի 10.4.

Եվ երբ դուք ստանաք այս բաները, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չեն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ»:

Եթե մենք ասում ենք, որ հավատում ենք Աստծուն, բայց սրտի խորքում այդպես չէ, մենք չենք կարողանա ստանալ բոլոր օրհնությունները, որոնք Երկնային Հայրը նախատեսել է մեզ համար: Պետք է խնդրենք անկեղծ միտումով, հավատքով, աղոթենք, պահենք պատվիրանները: Եթե հավատք ունենանք առ Հիսուս Քրիստոս և աղոթենք՝ կստանանք մեր բոլոր հարցերի պատասխանները: Մեզ հասանելի կլինեն Աստծո բոլոր օրհնությունները և, ի վերջո, հավերժական կյանքը: ■

Էլեն Գ.



Մենք ամուր կլինենք, եթե սրտով մաքուր լինենք

Զարուհի Թ., Երևան ճյուղ.

Ես ընտրել եմ 2 Նեփի 31.13 հատվածը.

Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, ես գիտեմ, որ եթե դուք հետևեք Որդուն սրտի ողջ նվիրվածությամբ, չգործելով ոչ կեղծավորություն, ոչ էլ խաբեություն Աստծո առաջ, այլ իսկական վճռականությամբ, ապաշխարելով ձեր մեղքերից, վկայելով Հորը, որ դուք կամենում եք վերցնել ձեզ վրա Քրիստոսի անունը մկրտությամբ,– այո, հետևելով ձեր Տիրոջը և ձեր Փրկչին, մտնելով ջուրը, համաձայն նրա խոսքի, ահա, այն ժամանակ, դուք կստանաք Սուրբ Հոգին. այո, այն ժամանակ կգա կրակով և Սուրբ Հոգով մկրտությունը. և, այն ժամանակ, դուք կարող եք խոսել հրեշտակների լեզվով և գովք բացականչել Սուրբին Իսրայելի»:

Ինձ այս հատվածը դուր է եկել նրա համար, որ մարդկանց ասվում է, որ նրանք չպետք է խաբող ու կեղծավոր լինեն, այլ մաքուր սրտով հավատան, որպեսզի Սուրբ Հոգին նրանց հետ լինի և նրանք կարողանան հավերժական կյանքին արժանանալ: ■

Զարուհի Թ.

Եկեք պահենք պատվիրանները և մեր խոստումները

Հովհաննես Պ., Մալաթիա ճյուղ.

Կցանկանայի կիսվել Մորմոնի Գրքից իմ սիրելի հատվածով՝ Ալմա 36.1.

Որդի՛ս, ականջ դիր իմ խոսքերին. քանզի ես երդվում եմ քեզ, որ որքան որ դու կպահես Աստծո պատվիրանները, դու կբարգավաճես երկրում»:

Ես սիրում եմ սուրբ գրության հատվածները վերագրել ինձ: Եթե այս հատվածը վերագրեմ ինձ, կստացվի հետևյալը. §Հովհաննես, որդի՛ս, ականջ դիր իմ խոսքերին. քանզի ես երդվում եմ քեզ, որ որքան որ դու կպահես Աստծո պատվիրանները, դու կբարգավաճես երկրում»: Առհասարակ, սիրում եմ սուրբ գրության այն հատվածները, որոնք խոստում են պարունակում ու գիտեմ, որ եթե Աստված մի բան է խոստանում, ուրեմն անպայման Իր խոսքի տերը կլինի: ■

Հովհաննես Պ.

Կինոնկար. «Ջոզեֆ Սմիթ. Վերականգնման Մարգարեն»

Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները, ինչպես նաև բոլոր ցանկացողները, կարող են ծանոթանալ «Ջոզեֆ Սմիթ. Վերականգնման Մարգարեն» կինոնկարի վերջին տարբերակի հետ, ինչպես հայերենով, այնպես էլ ռուսերենով և ուկրաիներենով:

Սա Ջոզեֆ Սմիթի կյանքի առաջին լայնածավալ էկրանավորումն է. Մարգարե, ով կանգնած է Աստծո Եկեղեցու վերականգնման ակունքներում բազմադարյան Ուրացության ժամանակաշրջանից ի վեր: Ջոզեֆ Սմիթի մասին նախկին կինոժապավենները նվիրված էին նրա կյանքի առանձին դրվագներին, հատկապես՝ Առաջին Տեսիլքին:

Կինոնկարը նկարահանվել է 2005 թվականին և ավարտին է հասցվել 2011 թվականին: Նկարահանման խմբի խնդիրն էր պատմել Մարգարեի մարդկային հատկանիշների և բնավորության մասին, որը ձևավորվել է բազմաթիվ փորձությունների, օրհնությունների և Աստվածային հայտնությունների ներգործությամբ: Պատմությունը ներկայացվում է Մարգարեի մոր՝ Լյուսի Մակ Սմիթի անունից:

Կինոնկարը թողարկված է Եկեղեցու Բարձրագույն Իշխանության հավանությամբ: Թողարկումից հետո կինոնկարը ցուցադրվել է Յուտայի նահանգի Սոլթ Լեյք Սիթիի Ջոզեֆ Սմիթի հուշահամալիրի Լեգասի կինոսրահում և աշխարհի շատ երկրներում գտնվող տաճարների այցելուների կենտրոններում:

Կինոնկարի հայերեն տարբերակը առկա է **www.hqvose.am** կայքում: ■

Դրվագներ կինոնկարից

ARMENIAN